ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
«ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԾԻԳ ՊՀ
"CENTER FOR EDUCATION PROJECTS" PIU SA

Ս. Վրացյան 73
Երևան 0070
Հայաստանի Հանրապետություն
հեռ. (374-10) 57-56-90
հեռ/ֆաքս: (374-10) 55-97-50
E- mail: info@cfep.am

Address: 73 S. Vratsyan Str.
Yerevan 0070
Republic of Armenia
Tel: (374-10) 57-56-90
Tel/Fax: (374-10) 55-97-50

N 45-05/26
«21» 05 2026թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
	չափաբաժնի									
ծածկագիրը	համարը	անվանումը	գնման գինը /դրամ ՀՀ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության կարգավիճակը	միկրոձեռնարկության կարգավիճակ			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

ԿԾԿԾԻԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/7	1	աշխատանքային գրքույկների համար նախատեսված թղթամատակարարում	20,600,000.00	«Ամուրա» ՍՊԸ	Ավան, 2-րդ միկր. 2/10	01091505	11.05.2026թ	ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ ՊՀ	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետ և 42-րդ կետ	«Ամուրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համաձայն սահմանվող ձևաչափի, որն անհրաժեշտ է ներկայացնել և՛ հաստատված, և՛ աշխատանքային (word) տարբերակներով, առաջարկվող ապրանքների ցանկի (բացվածքի) միավոր արժեքների գնացուցակը, համաձայն սահմանվող ձևաչափի, որն անհրաժեշտ է ներկայացնել և՛ հաստատված, և՛ աշխատանքային (word) տարբերակներով: Դրանով պայմանավորված 2026 թվականի ապրիլի 30-ին գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Այնուհետև՝ 2026 թվականի մայիսի 6-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ «Ամուրա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում համակարգի միջոցով ներկայացվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները մասամբ, մասնավորապես առաջարկվող ապրանքների ցանկի (բացվածքի) միավոր արժեքների գնացուցակի հանրագումարը գերազանցում է մասնակցի կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկը: Այնուհետև՝ 2026 թվականի մայիսի 11-ին գնահատող հանձնաժողովը որոշել է «Ամուրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ ամբողջությամբ չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, որը համարվում է գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում:

«Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ ՊՀ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ